36. ԸՌԵՍ ԶԿՌՆԱ ԾՌՈՒ ՄԱԼ ՈՒՏԱ

Կէղնի-չէղնի մեկ ծուռ, մեկ խելացի աղբեր ու էդոնց լե մեկ պառավ մամ կէղնի։

Մեկ օր պառավ գելնի կով կիտա էն ծուռ տղին, օր տանի արծրցու։

Էդ ծուռ տղեն ա, կը տանի ղկով մեկ խորունկ ձորու մի մեջ, կաչքա օր կէղի հազար հատ սև գիլհավքեր հ'իջած ին էգա տեղ։ Կը բերա, զկովու օտներ լավ կը կապա, կը մորթա ու էդ հավքերուն կասա.

— Սև-սև տերտրներ, արե՛ք կերեք, գացեք իմ ջոջոյի հոգուն մեկ պատարագ էրեք։

Տղեն կաչքա օր ուր վերև, մեկ քարիմ վրեն մեկ հատ մողոզիկ ա կայներ։ Էդ մողոզիկին կասա.—Հորքո՛ւր, դու լե շհատ կեցի, ես կով մորթեցի տվեցի տերտրներուն, համ պատարագ էնին, համ զիմ կովու գին տան։

Էսմլա կըսա, կը թողա, գիգա գեղ։

Պառավ կը հարցու.—Տղա, հ'ո՞ւր ա կով։

— Զկով մորթեցի, տվեցի տերտրներուն, օր քու հոգուն պատարագ էնին։

Պառավն ա, կը կատղի, կառնի փեստ, կընկնի հ'ետևից, կասա.—Գրող զանա քու կշտին, սատանի փայ ու բաժին էղնիս։ Դե՛ զնա՛, զկով բի։

Էդ ծուռ կէրտա, կաչքա օր հավքեր կովու ջանդակ կերած պրծած ին, զուրին օր տեսան, թռան։

Ծուռը բռռաց.—Է՜յ, տերտրնե՛ր, հ՚ո՞ւր կէրտաք, կովու գին տվեք, ջոջոն զընձի ծեծեց, պատարագ ղապուլ չէրեց։

Է՜, հավքեր ըսկի տղին ականջ կէնի՞ն։ Թռան գացին։

Ծուռ նստավ կովի ջանդկի մոտ, լաց։ Մեկ էլ տեսավ հորքուր մողոզիկ հ՚ելավ քարի վրեն. հըմա օր տեսավ զմողոզիկ, ասաց.—Հորքո՜ւր, զիմ կովու գին տո՜ւր։

Մողոզիկ փախավ մեկ գալտա տեղ, մտավ քարի տակ։

Էդ ծուռ հ՚ելավ, լանկեմ զարկեց էդ քարին։ Քար շրջավ, տեսավ մեկ ջվալ օսկի կեր էդ քարի տակ հորած։ Բուռ մի, էրկու լցեց ուր ճեպ, առավ էկավ։

Մեծ աղբեր աչքեց զկով չբերի, վազեց վրեն օր ծեծեր, հըմա էդ ծուռ հանեց մեկ ճանկ օսկի, ցպնեց դեմ աղբոր աչքեր։

Աղբեր կզավ, զէն գետնի օսկիք վերցուց, սդաբուն ճեպի մընացած օսկիք հանեց, ըսեց.—Տղա՜, էդ օսկիք հո՞ւստա ա։

— Հորքուր մողոզիկ տվեց,—ըսեց։

— Տղա՜, էլ կա՞։

— Շա՜տ, կէղնի մեկ ջվալ։

Առավ ծուռ աղբեր, գնաց, զօսկիք առան, էկան։

Քանիմ օր հ՚ընցավ։ Էդ գեղի հ՚ըռես հ՚իմցավ, օր պառվու տղեկներ խաղնա ա գտած։ Էկավ զէդոնց դուռ կտրեց[1] գաջեց-գաջեց զօսկու ջվալ գտավ։ Խելացի աղբոր օղորկեց կոտ բերելու օր կիսին։

Հըմա էն ծուռ աղբեր ջալագնտեց զըռես։ Տարավ, թալեց ջրհոր։ Խելացի աղբեր էկավ, տեսավ հ՚ռես չկա, հարցուց ծուռ աղբոր մոտեն։

Ծուռ աղբեր ըսեց.—Զըռես տարա թալի ջրհոր։

— Վա՜յ սև ցավի հ՚ըռաստ գայիր դու, ամեխ տեղ արունք էրեցիր,—ըսեց։

Գնաց հանեց, գիշերով պատնգեց, տեղ մի հորեց, էկավ սաղսաղ էծ մի տարավ, թալեց հոր։

Մեկել օր գեղի գլիր հ՚ելավ բռռաց.

— Մեր գեղի հ՚ըռես կորեր ա, վի՞ր տունն ա։

Ծուռ աղբեր ասաց.—Մեր ջրհորն ա։

Գեղովի էկան, թափան, ծուռ տղեն մտուցին ջրհոր օր հ՚ըռեսին հանեն։

Մտավ հոր, ձեռ տվեց իծու պոչ, դարձավ, ասաց.—Ձեր հ՚ըռես պոչով ա՞։

---

1 Բռնանալ (Ծ. Բ.)։

— Հա՛, հա՛,—ըսին էնդոնք,—հա՛ն։

Բոոաց էլմե.—Ձեր հ՝ըռեսին մուրուք կե՞ր։

— Հա՛, հա՛, հա՛ն տեսնինք, էդի մեր հ՝ըռեսն ա։

Ջանդակ հանեցին, օր մե փիցած էծ, նոր ծծղացին էդ ծուռ աղի վրեն ու թորկին, գացին։

Քանի տարի ետև էդ պառվի խելացի տղեն դոլվաթվորցավ, էղավ էդ դեղի հ՝ըռես։